դերն ու դղեակները, վանքերն ու տաճարները, կուրգաններն ու դոլմէնները, աչքադարեան պարիսպները, այգեստաններն ու ագարակները:

Ցայտնի բան է Եւրոպայում կատարածս բանակցութիւնների հետեւանքը 1908 թ. անբաւարար էր, քանի որ կապիտալիստները չէին դիջանում Կովկասում-ցարի իշխանութեան տակ վտանգել իրենց դրամագլուխը, մանաւանդ սրանց միջնորդները տքնում էին առիւծի բաժինը իրենք կուլ տալ եւ ոսկորները թողնել կալւածատէրերին: Ժողովրդի օգնութեան չէի ձգտում, այլ կողոպտելու: Իմ փափագս էր մի փոքր դրամագլուխ կազմել եւ ապա շրջել Ճորոխի բոլոր գաւառները, լուսանկարել եւ ուսումնասիրութեանս հետեւանքները հրատարակել. բայց այսօր, այլեւս յուսահատ, զգում եմ, որ չպիտի կարողանամ վերստին այցելել այդ վայրերը, վերստուգել, լուսանկարել, յատակագծերն ու հաւաածականները պատրաստել, մի ամբողջական գործ տալ, պատկերազարդ. ուստի գրի առայ, ամփոփեցի յիշատակարաններիս մնացորդները եւ յիշողութիւններս յանձնում եմ մամուլին:

1918—1920 տարիների խժդժութիւնների ժամանակ տունս հինգ անգամ խուզարկել եւ հաւաքածոյս ցրուել էին, 600 կտոր դիտական գրքերիս հետ, այնպէս որ նորից եմ հաւաքել եւ ժողովել այս բոլորը: